

ԻՆՏԵՐՆԱԿԱԼ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվա՝ 5 ռուբլ, Առանձին համարները 5 կոպեկով:

Քիչխուսում գրվում են միայն Վրաստանում միայն:

Օտարաբարաբար գիտում են ուղղակի  
Тифлис. Редакция „Менк“:

Վրաստանում բաց է առաւօտան 10—2 ժամ (Բացի կիրակի և տոն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

### ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

—Ներքին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրոպոլից: Նամակ Արևմտից: Նամակ Կանադայից: Նամակ Նամախուց: Ներքին լուրեր: Պրատաբին տեսութիւն: «Journ. de st. Petersburg» լրագրի յօդուածը: «Voyage» լրագրի թղթակցութիւնը: «Մշակ» շեռագիրներ: Ցայտարարութիւններ: «Մասնատեսութիւն»: Նամակ Քիւրքիայից:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Սեպտեմբերի 20

Վերջին քաղաքական անցքերի ազդեցութեան շնորհիւ, Քիւրքիայի հայ ազգը կրօնական համայնքից փոխվեցաւ քաղաքականացաւ ազգութեան, և այդ փոփոխութիւնից յետոյ նրան առօրեայ կեանքի կենսական նիւթերն և պահանջները այնքան բազմակողմանի և բազադրեալ նշանակութիւն ստացան, որ ամեն մտածողը, ինքն իրան հարց առաջարկեց թէ ո՞ր պէտք է կատարուի այդ գործերը, ո՞ր պէտք է աշխատէ ընդհանուրի համար, և ո՞ր պէտք է իրականացնէ այն յոսիւնը որոնցով ապրում է այժմ հայ ազգը: Եւ ամեն անգամ, մենք տեսնում ենք հասարակական գործունէութեան ասպարէզի մէջ երեք առանձին գործիչներ՝ հայ լրագրութիւնը, հայ երկրասարգութիւնը և հայ շոգնարականութիւնը:

Սոսնք հայ ազգի ամենամանրամասն մի խնդրի վերաբերութեամբ, այն է ազգութեան գաղափարի ընդհանրացնելու, և կրօնական գաղափարի

րից ազգութեան գաղափարի փոխարինելու վերաբերութեամբ, որովհետև այդ հարցը հայի համար կենսական խնդիրներից առաջինն է և ամենակարևորն է:

Այն մտաւորապէս չորս տարի է, որ լրագրութիւնը Կովկասում, կամ առելի լաւ է ասել «Մշակ» լրագիրը հայերի մէջ աշխատում է ժամանակակից գիտութեան իրական և անհրաժեշտ խնդիրները յարուցանել, և ընդհանրացնել ամբողջի մէջ արտայայտելով միակամայն այն միտքը, թէ Կովկասի հայը ընկալանապէս պարտաւոր է բարոյապէս օգնել Քիւրքիայի համարին եղբայրներին, առանց կրօնի և համադուժերի զանազանութիւն անելու:

Լրագրութիւնը մեր մէջ կատարեալ նաշատակութիւն է. մենք նրան կարգում ենք որպէս մի դուրսնութիւն, մի ինքնատիրական ցոյց և լրագրութեան յայտնած մտքերը մեր մէջ գոն մի քանի րօպէ հիւրասիրութիւն չեն գտնում, մենք իսկոյն մոռանում ենք:

«Մշակը» ինքնագոհութիւն է գործում, նա ազդեցութեան խնդիրը, նա կամենում է որ հայը հայ լինի, նա յարգում է կրօնական կուսակցութիւնների համոզումը՝ հաւատարմապէս, նա ցանկանում է որ հայ ազգի առանձնացած կրօնական կուսակցութիւնները կազմէին ազգային միութիւն: Գոտնում են մեզանում շատերը, որ արշաւարտում են այդ գաղափարները, ասելով, թէ այդ լրագիրը կրօնափոխութիւն է կամենում: Լրագիրը ասում է, թէ մեր անձնական կրքերը, դաւաճան կեղծագափութիւնները, եսականութեան չար նախանձր պէտք է վերցվեն մեզանից, մեր միտքը, մեր մտածումները այժմ պէտք է լինի ազգութեան ներկան, մեր ոյծերը պէտք է նուրբներ ազգային միութեան:

նը, եղբայրական համակրութեանը: Բայց այդ մտքերը ամբողջի մեծամասնութեանը մատչելի, հասկանալի չեն լինի, որովհետև լրագրի մտքերին չեն համարում հայ երկրասարգութիւնը և շոգնարական դասը, որոնք ապրում են նոյն իսկ ժողովրդի շրջանում, և այդ պատճառով, լրագրի յայտնած մտքերը երկար ժամանակ կը մնան անգործագրելի: Լրագրութիւնը երբեմնապէս պաշտպանելով հասարակաց շահերը, կողմնակի կամ ուղղակի յանդիմանում է մի վատ առաջնորդի, մի անգործ և անպարտաճանաչ ուսուցչի, յայտնաբերող երեցփոխանի, կամ մի որ և է անազնի հակասական երևոյթ արտադրող անձնակրօնական: Բաւական է, որ մի լրագիր յայտնէր մի շոգնարական անազնի վարմուճքը, գաւառական որ և է քաղաքում պատահած մի անցք, իսկոյն շոգնարական դասը կը յայտնէ իր «արդարացի» բողոքը լրագրութեան դէմ, պաշտպանելով իր պատկանելի պաշտօնի պատիւը հասարակութեան առաջ, թէ և ժողովրդական արդարացի դժգոհութիւնները, ցատք պէտք է ասել, որ անպակաս են շոգնարական դասի գէմ:

Լրագրութիւնը, բացի ժողովրդին օգտաւէտ մտքեր յայտնելուց, ունի և մի մեծ նշանակութիւն, այն է հասարակութեան մէջ ընթերցանութիւն տարածել: Բայց լրագրութիւնը մեր մէջ ըզբողոքաբար ծառայում է առանձնապէս մի մասնաց հակառակ կուսակցութիւններին, որոնք անվերջանալի կերպով յարձակվում են միմեանց յայտնած մտքերի դէմ:

Լրագրութիւնը մեզանում այն ժամանակ իրական օգուտ կարող կը լինի տալ երբ նրա յայտնած մտքերը, գաղափարները, հայացքները կը լինեն լուրջ ազգային թերթի խորհրդածութիւններ ճշուտ այն ներկրօնական հայացքից, որ տիրում

էր սորանից առաջ մի յայտնի լրագրութեան շրջանում: Գաւառական թղթակցութիւնները պէտք է լինեն նրա ձայնի արձագանքը, նրա ճշմարիտ ներկայացուցիչ ժողովրդի առաջ, լրագրութեան արծարծված գաղափարի անմիջապէս իրականացնողը, ընդհանրացնողը ամբողջի մէջ:

Լրագրութիւնը միայն անգործ է գործելու, ընդհանուր վերաբերութեամբ, լրագրութեանը պէտք է օգնեն բոլոր դաւանութիւններին պատկանող անհատները անխտրաբար, պաշտպանելով մտքի և նպատակի համերաշխութիւն և ձգտումների միակերպ առաջնորդութիւնը: Այն օրից, երբ «Մշակը» հաւատարմապէս պաշտպանեց և համակրեց ամբողջ Կովկասի հայերին, առանց կրօնի խտրութեան, նա դարձաւ ազգային լրագիր, նրանում թղթակցում ենք և մենք կաթոլիկ հայերս, և լուսաւորչականները և աւետարանականները: Կովկասի հայերի այդ առաջին միութեան և ազգային ինքնանշանակութեան քայլ էր, որ կատարվեցաւ «Մշակի» անեղծ եղբայրական ցանկութեամբ: «Մշակը» իրաւամբ կարող է ազգային լրագրի կոչվել, երբ նա Կովկասում առաջին պաշտպան հանդիսացաւ ազգային գաղափարի, և նրա ցանկութիւնը կը պահէ այն ճմարիտ իրողութիւնը, որ հաւատարմապէս բոլոր դաւանութեան հայերը, ժամանակով կը ճանաչեն նորա պաշտպանութիւնը Ազգութեան գաղափարի:

Պատրո Ռէպորտան

#### ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Սեպտեմբերի 29

«Մշակի» մէջ շատ անգամ պարզ կերպով բացատրված էր թէ ինչ պիտի լինի գաւառական

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Վ. Պոլյու, 27 սեպտեմ. 80

Արքեւնի պալատը մեծ մտատանջութեան մէջ էր: Սուլթանի կանանցիկ սև պահապանապետը մեռաւ, և յաջորդը պէտք էր ընտրել, և ընտրելին: Եթէ տաճկաց քաղաքակրթութեան մէջ որչափ յառաջադիմած լինեին կուպէք իմանալ, այս առիթս լաւ է: Քիւրք թերթերը կը հրատարակեն թէ ինչ մեծ դեր կը կատարէ սև պահապանապետը, նորա բարձրապատիւ տիրոջը կուտան, տէրութեան աստիճանաւորներուն զլլատուրն է, և Նիսի-Իլ-Իսլամի և մեծ վեղիքն վերջը ինքն կուպայ: Նորա կազմը շատ անգամ աւելի զօրութիւն ունի քան թէ բոլոր նախարարութեան կամքը, և ստէպ Բ. Իրան որոշանց հակառակ որոշում դրուած է, ազդեցութեամբ սև ներքինիին: Շատ ներքինիներ Սադրազամ ընտրուած են: Այս տեղեկութիւններն թիւրք թերթերն կը հազորեն: Կարծեմք սուլթանէն վերջը Տաճկաստանի իշխանը կանանցիկ պահապանն է: Այլ մտածենք թէ ինչ աստիճան յառաջադիմութեան ընդունակ է ժողովուրդը մը, ուր հասարակաց լուսաւորութեան պաշտօնեան սև ներքինիէ մը շատ ստորին վիճակի մէջ կը գտնուի, յորում ամեն բարձր պաշտօնեայք նորա առջև կը խոնարհին, և դեռ կարծեմք որ այսպիսի երկիր մը փրկուելու կարող է: Առաջին նախարար Սայիդ բաշա այդ փրկութեան համար կուզէ ամեն միջոց ի գործ դնել, բայց յայտնութիւն գտնելը շատ տարակուսական է: Գիւսանագիտական միջոցներու հետ միասին իւր ուղղութիւնը մամուլը, վրա կը դարձնէ: Ժամանակ մը Բ. Գոռը շատ կը կաշառէր և քրօնական մամուլը, այնպէս որ Տուռը բաշա կըսէ եղբր թէ մեծ փոխառութիւն մ'ալ մամուլը համար պէտք է ընել: Ատեն մ'է այդչափ ուղղութիւն չէին ընծայեր, այժմ Սաիդ բաշա կուզէ նորէն առջինին պէս ընել: Արքեւն անուն ֆրանսիացի գնդապետ մը, որ սուլթանին ծառայութեան մէջ էր, այս օրերս Եւրոպայ

խրկեցին մեծամեծ գումարներ դնելով նորա տրամադրութեան տակ Եւրոպայ թերթերն բարեկամ ընելու համար: Պ. Արքեւն մասնաւորապէս երկու միջոցներու պիտի դիմէ, մին է թերթերուն պաշտպանողական յօդուածներ գրել տալ ի նպաստ Տաճկաստանի, միւսն որ թերթերն որ բաւական յառաջացած են ընդդէմ Քիւրքիոյ և իրենց ներքին չէ պաշտպանութիւն ընել, համոզել զանոնք որ եթէ պաշտպանուի իւր ընեն, գէթ յարձակում ալ չընեն, և այս ալ բաւական բուն է: Սյս կէտն մեզ համար կարեւոր է. Եւրոպայի մամուլն ընդհանրապէս մինչև հիւս մեզ համար համակրական լեզուով կը խօսէր, և կը սպասեմք որ այսուհետև հասարակաց կարծիքն աւելի լուսաւորեն մեր ինդուստրիա համար, սակայն մեզ նոցա շատ պղտոնական փոխարինութիւն կընենք. չունինք նաև մասնաւոր օրգան մը մեզ համար: Լաւ կըլլայ եթէ քիչ մը ասոնց ուղղութիւն ընենք: Վ. Պոլյու մէջ ալ կառավարութիւնը աղէկ մը տանձնք քրիստոնեայ թերթերն: Իսկ տեսնելով որ թիւրք թերթերուն խիստ լեզուն բաւական վրդուած կը պատճառէ, նոցա խնայողներուն պատուիրեցին որ այսուհետև քիչ մը մեղմ գրեն, որով քանի որ է տաճիկ լրագիրներն այնքան վայրենաբար չեն գրեր: Ամենէն շատ Օսմանի ֆրանքո-թիւրք թերթը կը ցաւի, դի հայկական խնդիր իրեն դժբախտաբար ըրած էր, այն թիւրքը, յորում մեզ դէմ կը գրէր, մի հատ չէր մնար. այսօր խմբագրատան մէջ անհնար է հայոց դէմ յօդուած պարտականող թերթէն մին գտնալ, և խմբագրապետն իսկ զարմանք կը յայտնէր: Օսմանի ողբեր կը կարդայ հայկական խնդրոյ առթիւ. շիրք թէ բաւական չըլլային կըսէ, առկախ մնացած այնքան խնդիրներն Արևելից վերաճութիւնը արգելելու համար, և ահա կը սպառնան մեզ հայկական խնդիր մը ևս, զոր արշեստական կերպով կը զարթուցանեն: Բայց չեն զխտր թէ այսու փոխանակ հայոց միճակը բարեւոքելու, աւելի կը փառաբարացնեն զայն, զի նոր խնդիր մը ուրիշ բանի չը ծառայեր, բայց եթէ աւելի երկարելու այն ճգնաժամը որ կը ցամբցնէ, ամենայն արդիւր բարգաւաճման և նիւթակէն բարեկեցութեան:

«Ատեն մը երբ հայերն աւելի նուազ ճանցուած էին Եւրոպա և ոչ այնքան հարեալ այն գաղափարաց, որք այժմ ի սրտուի են, և զոր արդարապէս կըրնամք կոչել՝ շարքեր գաղափարք, շատ աւելի լաւագոյն էր հայոց վիճակը: Կայսրութեան բոլոր գանձերն հասարակաց թէ անհատական իրենց ափսոսում մէջն էր. իրենցմէ կախում ունէ այսօր երկիրն ամենէն մեծ դրամագէտներն լինել: Բայց յորմէ հետեւ ցնորական գաղափարներ տիրապետեցին այս հասարակութեան երկրասարգաց մէջ մասին գաղափարաց վրա, կը տեսնեմք անձեր, որք նախապատիւ կը համարեն իրողու լքանել ճարտարարուեստութեան, վաճառականութեան և գանձուց օգտակար ասպարէզներն և նետուիլ քաղաքական բազալախարութեանց մէջ, որ այնքան վտանգաւոր են թէ երկիրն ապագային և թէ նոցա համար, և որ առ այժմ զիրենք աւելի զժամաղկ կընեն»:

Օսմանի լի խօսքերէն կը տեսնուի թէ բարձր շրջանակներու մէջ իսկ երկիրը մը կը զգան հայկական խնդրոյ ապագային յայտնանելի փոթորիկներու վրա, և տեսնուցադրական հրապարակելով կուզեն զմեզ պատրել: Եթէ Օսմանի լրի խմբագիրներն ի մտոյ ուսումնասիրած լինէին զհայերն, պիտի տեսնէին թէ ճշտ տեսնուցադրական հարցերն են, որ պատճառ եղան հայկական խնդիրն զօրացնելու: Ատեն մը մեր հայեր կը կարծէին թէ քրիստոնեայ և մաճնետական կրօնից մէջ եղած խտրութիւնը բաւական է հայ ազգութեան պահպանութեանը. բայց այն երկրասարգութիւնը, որ ըստ Օսմանի լրի ցնորական գաղափարներու տուած է ինքզինքն, բաւական ստրկացաւ քաղաքական տեսնուցադրութիւնը և տեսաւ որ միայն կրօնը բաւական չէ ազգի մը պահպանութեան, և թէ կառավարութիւնը լաւ ըմբռնած ըլլալով այս ճմարատութիւնը, հայ ազգի հարստութեան աղբիւրներն ցամբցնելու հետամուտ էր, որով կանուխ կամ ուշ հայ ժողովուրդը ինքզինքն ողորմելի կամ փճանալու մեծ վիճակի մէջ կը տեսնէր: Հոս տեսնող չէ այս նիւթին վրա երկարորէն խօսել, անոք որ կերթան Հայաստանը կը պտուռեն, զայս իրենց աչքերով կը տեսնեն: Իսկ Վ. Պոլյու մէջ ալ

կառավարութեան երեք անգամ սնանկութիւնը՝ որ է ընդհանուր պարտուց, թղթադրամի և մթալիկի սնանկութիւններն, խեղճ ժողովրդի դրամագլուխը փճացուցին և մեծ հարուած տուին Հայաստան ընակող դրամատէրներու, որ մեծաքանակ ունէին այս արժեքներէ, և հայ գիւղացոց, որք շատ թղթադրամ և մթալիկ ունէին: Հարկ է ըսել թէ ինչ պիտի օրէնքներով կը կաշխանէ թիւրք կառավարութիւնը երկիրն նիւթական բարգաւաճումը, զի վաճառականութիւն և արջեստք քրիստոնէից ձեռքըն են. թիւրքերը չեն ուզեր որ մնան, և հայերն որք իրենց աշխատասիրութեան և ընդունակութեան գաղափարը աշխարհի տուած են, այսօր ամենաթշուառ վիճակի մէջ են գրկթէ: Արդ պարզ է հարցնել. ժողովուրդ մը, որ բարեբեր երկիրներ ունի, վաճառականութեան յարմար տեղեր գրաւած էր ինքն, աշխատասէր, բարոյականի տէր և կարող է, բաւական դրամագլուխ ունէր, և օրըստօրէ կը աղքատանայ, ուրմնն շարտանալու համար ուրիշ ինչ էլ էր: Այս մտածութիւններն առաջնորդ կըլլան նոցա, որք կը գործեն, և ոչ թէ բարձր պաշտօններու հասնելու խանդը, ինչպէս կըսէ Օսմանի: Պ. Չէրազ Կոպուրէ քիւլայի մէջ լաւ հրդեհակեց ի ներկայութեան աշխարհս մեծ անտեսագէտներու թէ «Սախայի մէջ կը գտնուի ժողովուրդ մը, որ տակալին արտադրելու ազատութիւն չունի և բնութեան մասնաւոր կերպիւ նպաստաւորեալ երկիր մը մէջ, որ խանձարութեան եղած է հանձարեղ և գործունեայ ազգաց, հարստահարութիւնը կը դատապարտեն արդարողն ի կործանումն և ըսպառողն ի սով»:

Հայաստանի այս տեսնուցադրական վիճակն լաւ պարզուեցաւ պ. Պրայսի, որ ի հարկին պէտք եղած բացատրութիւններն կուտայ անողորմ խորհրդարանի մէջ: Հայ երկրասարգութեան մի քանի պատգամաւորութիւններ ներկայացան պ. Պրայսի, յայտնեցին շնորհակալութիւն այն համակրանաց համար, զոր պարտքը ցոյց տուաւ մեզ նկատմամբ խորհրդարանի մէջ, և իրեն տեղեկացուցին ազգային մտաւոր դարգացման վիճակը: Պ. Պրայս ի մէջ այլ յորդորներու կարտասանէ նաև սա խօսքերն պատգամաւորութեան ամենէն նշանաւոր

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» № 176 մէջ տվեալների մի ցուցակի մէջ մի սխալ մտաւ: Ստանաւորին Շահազարեան որ նուիրեց ծրագրի բարձրութիւնը յիշված չէ եղել: Բայց ստանալի փոխանակ օրիորդ Սօֆիա Շահազարեան, պէտք է լինի տիկին Սօֆիա Շահազարեան:

Ծնորակալութեամբ ստացաւ պ. Ա. Քալանթարեանցի ճեղքանակութիւնը ուսուցիչ լիզուով «Ռուսաստանի անասունների արդիւնաշատութեան խնդիրը» (Вопросы о приращивании продуктивности скота): Գրքուրը տպւած է Մոսկվայում, ներկայ 1880 թ. մինչև, Արարիչութի տպարանում: Այդ աշխատութիւնը կարգում է մի բաւական մշակված, Ռուսաստանում եղած անասնապահութեան այլ և այլ ձևերի տնտեսական քննութիւնը:

Մեզ խնդրում են յայտնել որ ներխուժան ազգային-հոգեւոր զգրոցի նոր հարաբարձութեան ընտրութիւնը կը լինի ներկայ չօկտեմբեր ամսի 19-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին, նոյն զգրոցի մէջ, որի մասին արդէն բազաբնու բոլոր եկեղեցիների մէջ եղած է ծանուցում:

ԱՅՈՒՅԻՆ ԱՅԻՆ Եւզ գրում են, սեպտեմբերի 21-ին, տեղային երկրաստորութեան խնդրանքը համեմատ, Խորէն աւագ քահանայ Բարսեղեանցը հրահրեց քաղաքի զանազան դասակարգին պատկանող անձանց, և առաջարկեց նուէրներ հաւաքել յօղուտ թիւղքաց Հայաստանի սոխտանըներին: Նոյն ժողովում ստորագրեցին մինչև 404 քուրդի: Ստորագրութիւնները դեռ շարունակուում են: Մի և նոյն նպատակով դիտարկութիւն ունեն ստորագրութիւն բացանել կանանց սեռի մէջ: Այդ աշխատութիւնը յանձն են առել տիկին Աշխէն Բախչանց և օրիորդ Ս. Յովհաննէսեանց:

Օրերումս մի աշակերտցի 15 տարեկան աղջիկ մտնում է ՔԱՄՍԻՆՅ Եկեղեցու բալը մուրացկանութեան համար: Նոյն բալում բնակվող մի հրէայ ընտանիքի ուղին մտնում է աղքատ աղջկան և անհամեստ առաջարկութիւն է անում: Վերադարձված աղջիկը բռնում է նրա կոկորդից և կամենում է խնդրել: Եկեղեցու ժամուրը և ուրիշները վրա են հասնում և աղատում են հրէային: Նամա-

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 24

Ուղարկելով ընդամենը չորս քուրդի (4 ք.) որ տիկին Մարթա և օր. Մարիամ Տէր-Ներսիսեանները նուիրել են միանուագ յօղուտ «Արարատեան» այժմ «Միացեալ ընկերութեան հայոց» ի Կ. Պօլսի, պարտք են համարում «Մշակի» 161 թուահամարում գրած: Բացառելով համար յայտնել, որ ընկերութեան օգտին ժողոված փողերը եւ ընդունել են անցեալ տարուայ սկզբումն եկեղեցու կանոնադրութեանը ուղարկելը, որպէս զի նորա շահեցր օգտվի ու 3-րդ համար եկեղեցին և խնամարարութեանը ուղարկելը, որպէս զի նորա տից և եկեղ տուարին այդ տոկոսը մտած են յիշեալ եկեղեցու արկը, որ իր լրութեամբ պատկանում է Գանձակի բաղմահարստ երկեսու զարդոցներին և նշանակված է նրանց շինութեանց համար: Բայց մեզ վրա ոչինչ տոկոսը չէ մնում, ինչպէս կարծում է պ. Փոխմարտիս:

Իսկ ինչ վերաբերում է տարեկան անդամակցութեան յիշեալ ընկերութեան իմ կողմից լաւ համարելի փոխարինել տարեկան փողերի նուէրը միանուագ 100 քուրդ տալով, որ արդէն հասած է ըստ պատշաճին:

Երեցիտիսան Ն. Տիր-Նելսեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԿՈՒՑ

Սեպտեմբերի 14

Վերջին օրերումս, սկսեալ յուլիսի 26-ից, այսինքն այն օրից, երբ Շամախու հասարակութիւնը չին երեցիտիսանին արձակել է և եկեղեցու շինութեան հայտը պահանջում է նրանից. «Մշակ» լրագրի միջոցաւ, (ինչպէս երևում է նրա 149, 160 և 163 համարները), հրատարակված են մի քանի գրվածներ, որոնք իրանց անհիմն և ինքնաշար բովանդակութեամբ բոլորովին օտարադիմ իմն են մի հասարակութեան համար: Տեղեկութիւններ, որոնք գրված են անանուն յօղուտագրի գրով միայն արձագանք են կրքի և ոչ այլ ինչ, առհասարակ ստում է պ. յօղուտագիրը ամեն մի գործի վերաբերութեամբ, որոնք հաստատում են ճշտեալ փաստերով: Չորս տարի է, որ Շամախու հասարակութիւնը իր սիրելի առաջնորդ Քա-

ղէսու կայսրութի ջանասիրութեամբ և նրա վարդապետի աջակցութեամբ առաջ է խաղացնում իր ազգային երկնի գործերը: զորանք են տեղուտ Մար եկեղեցին, օրիորդաց ուսումնաբանի շինութիւնը և ս. Սեփանոսի վանքը Սաղիսում, որոնք յաւիտենական վկաներ են սրբազանի աշխատասիրութեանը, դեռ մնան այլ բարձրագործութիւնները, որք կը յայտնվեն իրանց ժամանակին: Բայց երկեսու զգրոցների մասին, որ յօղուտագիրը երազում է, բոլորովին անտեղի են, որովհետև նրանց մէջ դասաւարտութեանց շարունակութիւնները կանց առած չեն երբէք, ինչպէս, շնորհիւ մեր սրբազանի, այժմ էլ շարունակվում են: Եւ եթէ ներկայ սեպտեմբերի 1-րդ մասումը դասաւարտութիւնը փոքր ինչ յետաձգվեցան, բայց դրա պատճառն էին մի երկու շահանքի հոգաբարձուներ և ոչ սրբազան ինքը կամ նրա վարդապետը: Իսկ ինչ կը վերաբերի կրօնական արարողութեանց, կանոնը, որ յօղուտագիրը միայն իր ցուրտ զգացմունքն ու ստանաւորութիւնն է զձագրել զէպի նա, և ոչ մեր մէջ պատշաճ մի եղելութիւն:

Այժմ դառնալով զէպի յարգոյ խմբագիրը «Մշակի» կը խնդրեմ, որ նա տեղիք չը տայ այսուհետ լցնելու իր պատուական լրագրի էջերը մի այս տեսակ խառնակի ստալոյ գրուածներովը ինչպէս վերոյիշեալ համարներումը տպված են Շամախու դրոպեան վերաբերեալ օտուտ և անտեղի լուրերը: Մենք տարակուսութիւն չունենք կըրքոտ յօղուտագրի մասին, որովհետև այլ է մեր ճշմարիտ զգացմունքը զէպի արդարութիւնը, այլ է և նրա զգաբարտութիւնը զէպի նոյնը: Սակայն խառնարար կուտակցութիւն երբ, որ երեակայում է նա, միայն լրագրի մէջն ենք տեսնում, իսկ մեր քաղաքի հասարակութիւնը խաղաղ և անկրօղ կեանք է անցկացնում, առանց ուշադրութիւն դարձնելու յօղուտագրի անձնատրութեան վրա: Կը խնդրեմ յարգոյ խմբագրից, որ տեղ շնորհէ մեր այս նամակին «Մշակի» մի անկիւնումը ի միամտութիւն յարգոյ ընկերոջ ներքին:

Ալ. Լալայեանց, Յակոբ Գեօղիայեանց, Կոլլեժակի ասակտոր Յակոբ Միկիտեանց, Գէորգ Տէր-Յովհաննէսով, Միք. Աւարով, Գէորգ Կանկանեան, Ալ. Եսայեանց Նաջարեանց:

պատրաստութիւնները կը տեսնեն. կղզիներ, նեղուցներ կարացնեն, ամեն կողմ թորթիլներ կը գետնեն, ամեն կերպով Եւրոպայի դիմարկելու կը պատրաստուին: Կարծեմք թէ հոս նեղ ժամը պիտի անցնենք: Վերջին ծանուցալից կառավարութիւնը շուտով ճիւղատարակեց. այդ ծանուցալիցն հրատարակել տալով կառավարութիւնը տաճիկ հասարակութեան համակրութիւնը կողմ բուրբորին գրաւել. այսպիսի զուտութիւններ կընեն պիտի ըսէ և դեռ. Եւրոպայ գոչ չէ, ուրեմն պատերազմներ: Թիւրք կառավարութիւնը կը կարծէ որ իրեն անհնար պիտի լինի յաղթուել առաջ Եւրոպայի կամըր կատարել: Մանուցալիքը ճշտեալ լրութիւնը կը պարունակէ. 1. Չէրնոգորիայի խնդիր. 2. Յունական խնդիր. 3. Բարնեոքորութիւնը հայոց ընկած տեղերը. 4. Կանոնադրութիւն կայսրութեան եւրոպական գաւառաց. 5. Բանկային խնդիր: Մենք մեզի պէտք եղած կէտը առնենք:

Կառավարութիւնը նախ կը յայտարարէ որ եթէ 61-րդ յօղուտածի համեմատ տեղութեանց չէ աղորդած ըրած բարեկարգութիւններն, պատճառն այն է, որ բայց քանի մը քաղաքներու մէջ ոստիկանական բարեկարգութիւններ, կառավարութիւնը չէ կրցած պէտք եղած բոլոր բարեկարգութիւններն ընել: Գէջ արդարացում չէ: Բայց այժմ Պէյքը բաշայի և սելիչ պաշտօնէից ըրած քննութեանց շնորհիւ որոշած է ի գործ դնել ճշտեալ միջոցներն:

- 1. Երզրումի, Վանայ, Բաղշի և Տիգրանակերտի դատարաններն աւելի լաւ կերպով կարգակերպել և բարեկարգել: Կայսրութեան բարձրաստիճան բաշայ ըր յատուկ պաշտօն պիտի ունենայ չսկիւ այդ բարեկարգութեան: 2. Կուր Եւրոպայի կառավարութիւններէն պահանջած երաշխարկութիւններն ընդունելն մինչև երեք ամիս վերոյիշեալ գաւառներու ոստիկանութիւնը և ժանդարման պիտի վերանորոգէ: 3. Ժանդարմայի գնդակներն պատերազմի պաշտօնեայ պիտի ընտրէ: Միւս պաշտօնեաներն զանազան եղանակաւ պիտի ընտրուին և վաւերացումը պատերազմի պաշտօնեայ պիտի ընէ:

Հակոբ

թերթի նպատակը, ինչ պիտի լինի նրա ուղղութիւնը: Մեր քաղաքում կայ այժմ մի գաւառական թերթ շայն լիզուով «Պատկի վեճագրով, բայց այդ լրագրի ուղղութիւնը, նրա նիւթերի բովանդակութիւնը պարզ երևում է, որ խմբագիրը չիմեն է իր լրագրը: Եթէ միայն լրագրի անունը կարելի է նրան տալ: միմիայն իր անձնական վրէժը հանելու գիտմամբ մի քանի իրան անհասկնալի անձնատրութիւնները: Եւ ճշմարիտ այդպէս էլ վարվում է խմբագիրը. ասում են որ նա ստրան նրան գիտում է խնդրելով որ գրեն յօղուտներ իր այս կամ այն անձնական թշնամու զէմ: Այսպիսով նա գիտել է «Մշակի» թղթակցներին մինչև, խնդրելով որ մի յօղուտով խայտառակէ պ. Բէր-Նազարեանցին, բայց որովհետև դա չէ կանոնը պ. Բարաջանեանի խնդրըրը կատարել, իսկոյն «Պատկի» ֆիլիսոսֆի ինչ երեցեաց նոյն թղթակցի ներկարարիլը իր թէ նա հարբող է, գինեաներում ընկած, այնտեղ ամբողջ գինեաներ անցնող մարդ է: Եթէ այս է մի գաւառական թերթի նպատակը, դա մեծ օգտու չէ կարող տալ ժողովրդին:

Յաւայի չէ արդեօք, որ մեր լրագրութիւնը այդ կորստաբեր շաւղով է առաջ գնում, մե միւսից օրինակ առնելով: Նորերումս «Պատկի» մէջ կար տարված մի նամակ Վաղարշապատից «Մշակի» մէ աս ա կ ար ուղղութեան զէմ և տակը ստորագրված՝ «ստորագրութիւնը» բառը կարծես թէ հարկեր մարդ են ստորագրել: Նրեի ս ո տ ր ա գ ր ու թ ի լ ը ք բ ա ռ ք վ եր ա բ ր ի լ ու մ է Ղ. Տէր. Ղազարեանցին: Բայց ընդհակառակն երեանցիները շատերը և նոյն իսկ ես իմ սեփական աչքերով տեսած եմ փոստով վերադառնող համայնները, որոնց վրա ճշտեալ մեկնադրութիւն է լինում առ սերելն լիզուով վերադարձել իրան խմբագրին:

Եթէ արդարեւ Բարաջանեանը չիմեն է իր թերթը ստրան նրան հայտնելու, փողոցային բառերով, գոնէ քննել այդ թերթի վերնագրից մանկավարժական և գրականական վան բառերը: «Պատկի» նշանաբանն է՝ հայտնաբեր և խայտառակութիւն:

Շատերը պատրաստեցին «Պատկի» հայտնաբերելին պատասխանելու, բայց իրենց պատիւը լուրթեան մէջ որոնեցին, վասն զի այդ լրագրի բռնած ընթացքը տեղիք է տուել երեանցիներին շատերին կասկածելու խմբագրի ուղեղի առողջ արամագրութեան վրա:

Ա. Եր.

խումբին. Վիտեմբ քր լուսաւորական հայքը կը կայմը ազգին անկաստար մեծամասնութիւնը, բայց գիտեմք նաև որ դարուս ոգին նե, չնչնալ անշուշտ ո և է խ ու թ ի լ ը չ է ք ղ Ե ր մ Ե ր այն եղբայր մէջ, որոց գաւառանքն անգմէ տարբեր է: Պ. Պայտս եթէ քաղաքավար կերպով փոքր դաս մը կուտայ մեզ, զգացած է որ այս դասին պէտք ունի: Ներկայ պարագայից մէջ մեզմ տարբեր դասանք ունեցող հայերուն կարևորութիւնը անտրանալի է, և եթէ փիլիսոփայական, դադարեալները մեզ առաջնորդ չեն, զէթ մեր բաղադրական շահերուն ունեղիք լինի: Այսօր ճիւղագիրը կը հարցող մեզ թէ, զի. Հասուն մօտ օրերս կընդունի կարգինալութիւն և պիտի բողոքի կարգինալաց ժողովոյն մէջ: Տեղուտ ամենէն կարևոր թերթիկն է մին ֆրանսոս-անգլիական «Միամկուլը» քանի մը օր առաջ այս առթիւ հրատարակած մէկ յօղուտովը ցոյց կուտար թէ Եւրոպայ ինչ մեծ կարևորութիւն կընձայէ հայ կաթիլիկութեան: Մեզ համար վերջին աստիճան անբաղաւազատական գործ մէ ելլել կաթիլիկ և բողոքական հայոց զէմ յարձակումներ ընել ճիշտ այն պահուն, երբ կաթիլիկ և բողոքական կառավարութեանց պաշտպանութիւնը կը խնդրենք: Տիկիտի մէջ հրատարակուած մի քանի յօղուտներ մեծ ցաւ կը պատճառեն մեզ. անգլիացուց ինչ աստիճան կրօնաւոր լինելին գիտեմք, և եթէ այս օրինակ յօղուտներ Անգլիոյ թերթերուն մէջ թարգմանել տան մեր թշնամը, բաւական խնդրութիւն ըրած պիտի լինին: Անուշտ գիտեմք որ «Մշակ» և «Մեզու» հոս անգլիական դեպքանատուներ կընդունին և կարևոր յօղուտներն կը թարգմանուին, իրր կարծիք առաստիճան հայոց և կը խրկուին ուր որ անկ է:

Հասուն գերազանցաւ երբ կարգինալութիւն ընդունի, պիտի մեկնի ի Հաւով և չուն կարգինալաց ժողովոյն մէջն պիտի ուղղէ արեւելեան գործերն. հոս իրեն յաջորդ մը պիտի ընտրուի, և հաւանորէն կը դադրի հասունեանց և հակահասունեանց վէմ: Պատկիտրեան, հակահասունեանց ընտրած կաթիլիկուրը հնազանդութիւն ըրաւ Հասունին:

Ազգ. ժողովը երկի նիստ ըրաւ, Յանձնաժողով մը կազմեց Պատրիարքական ճառին պատասխանը պատրաստելու: Այս նիստը նոր կարևորութիւն մը ունի, վասն զի Կ. Պոլսոյ Ազգ. ժողովոյ և Եւրոպայ ճիւղ յարաբերութեանց խնդիր մը կը ժաղի: Պ. Ա. Փափազեան առաջարկ մը կը ներկայէ թէ ՎՋ միւսին 17000 քուրդի ունի Աշակերտի գաղթականաց համար, եթէ այդ գումարը Ռուսաստանի հայք տուած են աշակերտաց թշուառութիւնը դարմանելու, Վե. Կաթիլիկուրը այդ գրամն արժեքիւղը ըրած է և յաշակերտ զարդոյ մը հաստատութեան պիտի գործածէ, բայց քանի որ սովը սաստիկ կը շարունակէ, պէտք է որ այդ գումարը այժմ յատկանայ Աշակերտի սովեալներն խնամելու, ճիւղաբար Ազգ. ժողովը խնդրէ Վե. Կաթիլիկուրէ, որ այդ գրամն իր նպատակին գործածուի: Պ. Փափազեանի առաջարկն ժողովն ընդունեցաւ և Ազգ. վարչութեան յանձնուցեալ անվճարպէս նորա գործարկութեան կոչելու:

Մեր Ազգ. ժողովոյ այս ըրած կարևոր քայլը ոչ մի կու աչք կընայ փրկելու մէկ կողմէ նախանձ փնդիր կը ցուցնէ ինքզինքն իր ներկայացուցիչ ազգին չսկիւ ամեն նուիրատուութեանց վրա, որ իր նպատակին չը գործածուի, միւս կողմէ Եւրոպայեան գործոց միջամտութիւն կը սկսի ընել: Կայնք հոս հասարակաց կարծիքն ինչ կըմ այս խնդրներու վրա: Նոյնպէս ըստ պ. Փափազեանի առաջարկին մասնաւոր կերպով ժողովն իր ինչ ընել և Տանկատանի հայոց ինչ փնդակի մէջ լինելն պահանջուցաւ Վե. Կաթիլիկոսին պիտի հարցողէ այս խնդրոյն վրա ուրիշ ասեմ աւելի ընդարձակ կը գրենք:

Հայաստանէն ստիւ. մասին ցաւալի տեղեկութիւններ կը հասնին. անմիջական 50,000 քուրդի պէտք կայ պ. Կարգինեան և Արեւիկեան իրենց կ զմ վող պիտի տան այդ ստակը և ապագայ հանգանակութիւններէն պիտի առնեն:

Եւրոպայէն նոր ճեազարը չը կայ, բայց կերելի թէ վերջին ծանուցալիքը վատ տպագրութիւն մը արած պիտի ըլլայ:

Եւրոպական նաւատորմըրը Գարդանէն ներս մտնելու հաւանականութիւն կայ: Քիւրքերը մեծ